

NATURALISTIC BELIEFS OF EGYPT

G. A. Sarkisyan

In Egyptology is undeniable that in a period of about three millennium recorded history on the basis of “natural separation” intellectual development of Egypt evolved as a result of mixing of different elements that conditioned the formation of the respective religious beliefs. Therefore, because according to the geographical and social environment, Egyptian mythology stands out archaic totemic ideas developed, which persisted in the form of remnants in anthropological representations.

Thus, the sun god Atum was depicted a man with a double crown on his head and incarnated also in the form of a serpent, the sun god Ra was worshiped in the form of a falcon, sometimes - a huge cat, depicted as a man with a head of a falcon, a falcon god incarnate in Horus was depicted as a falcon or a man with head of a falcon, the patron god of the dead Anubis was honored as a man with a head of black jackal (wild dog), the god of fertility in the guise of the bull Apis, griffins - with an eagle's beak, and lion's body, etc.

ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՒՅՑԻ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԱՆՐԱԿԵՐՏԵՐԸ (ՄՈՂԵԼՆԵՐԸ)

Գ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

*ԵՊՀ Կրոնի պատմության և տեսության ամբիոնի դասախոս,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Ինչպես փաստական նյութն է վկայում, հին եգիպտացիների կրոնական մտածողությունը ամենահին էլ չի սահմանափակվել միայն հետմահու կյանքի կամ անմահության դիցաբանական պատկերացումներով: Այդ շրջանից մեզ հասած եգիպտական հուշարձանների վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել նաև բնիկների դիցաբանական աշխարհայացքը բնութագրող այլ կատեգորիաներ ևս, որոնցում ուրույն տեղ են գրավել աշխարհակառույցի վերաբերյալ պատումներն ու առասպելները: Մեզ հասած ընդոծին դիցաբանական պատումների համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել նաև աշխարհակառույցի եգիպտական պատկերացումների մի շարք ընդհանրական օրինաչափություններ:

Այդ ֆոնի վրա առաջին հերթին հարկ է մատնանշել այն իրողությունը, որ աշխարհակառույցի եգիպտական մոդելները նույնպես կառուցվել են դիցաբանական համակարգերը բնութագրող այնպիսի ընդհանրական օրինաչափությունների հիման վրա, ինչպիսիք են դիտարկումից բացատրության անցումը¹, ամենա-

¹ Այդ մոտեցման մանրամասները տես *Ильин В. В., Кармин А. С., Носович Н. В.* Религиозное учение. СПб., 2008, с. 14:

զոր հոգևոր ուժերի հետ երևույթների «հաղորդակցական կապի» շեշտադրումը², բնության մարդակերպ ուժերի օգնությամբ «քառսի ինքնակարգավորումը»³ և այլն: Ինքնին հասկանալի է, որ քննարկվող համակարգերում «Ես»-բնություն փոխհարաբերության դիցաբանական լուծումներում տեղ գտած գիտելիքները, պատկերացումները և գաղափարները **մարմնավորվել են երևակայական կերպարների տեսքով**: Եվ պատճառը եղել է այն, որ դիցապաշտ մարդը, իրեն համարելով բնության մի մասնիկը, իր հասարակական, անձնական ու հոգեբանական հատկությունները մի կողմից փորձել է բխեցնել բնության խորհրդավոր ուժերից և վերջիններս ընկալել է որպես կենդանի ու անձնավորված երևույթներ, իսկ մյուս կողմից համամանության դիրքերից այդ որակները տարածել է հասարակական երևույթների վրա: Այդ տեսանկյունից դիցաբանությունը հանդես է գալիս իբրև երևույթները բացատրելու և ուսումնասիրելու պատմական աղբյուր, իբրև վաղնջական ժամանակաշրջանի հասարակական կյանքի այլաբանական արտացոլում: Այդ ամենով մեկ անգամ ևս փաստվում է, որ դիցաբանական համակարգը համամարդկային արժեք լինելուց զատ՝ իրենից «... մտքի և զգացմունքի հսկայական և բարդ աշխատանքի բնագավառ է ներկայացնում: Դա ամենևին էլ ցեղերի մեկուսացված աշխատանք չէ ... այլ՝ համամարդկային աշխատանք, որի շրջանակներում երկրային ժողովուրդները փոխանակել են սեփական դիտարկումների և զգացմունքների փորձը»⁴:

Եվս մեկ բնորոշ առանձնահատկություն: **Աշխարհակառույցի եգիպտական մոդելներն ամբողջական տեսք են ստացել փուլային զարգացման արդյունքում**, որի հետևանքով նախնական դիցաբանական կերպարները «հասունանալով» դարձել են ավելի ամբողջական, բազմագործառնական, և այդ հիման վրա հրապարակ են իջել **դիցաբանական մի քանի շերտեր**: Դա է նաև պատճառը, որ դիցաբանական հասուն համակարգերում աստվածները թեև գործնականում զրկված են անհատական ազատությունից, այդուհանդերձ նրանց պանթեոնը հանդես է գալիս որպես «ներքին տրամաբանության և չափի պահպանման» վրա հենված ներդաշնակ և կարգավորված ամբողջություն: Այդ համակարգում ներառված աստվածներն ըստ էության հանդես են գալիս անձնավորված, մարդակերպ էության, սակայն նրանցից և ոչ մեկն օժտված չէ անհատականությամբ⁵: Այդ ամենին զուգընթաց անհերքելի պետք է համարել նաև այն, որ աշխարհակառույցի եգիպտական դիցաբանական պատումները հանդես են գալիս այնպիսի **փոխադարձ անցումների որակով**, որոնցում «... դեռևս գերիշխում է բնականը, անցման ձևը, որտեղ իբրև այդպիսին սկիզբը վերցվում է մյուսից, որն ընդհանրապես բնությունն է և այդ անցումն իրենով դեռևս չի նշանավորում

² Մանրամասները տես *Леву Брюлю А.* Первобытное мышление. Л., 1930, с. 48-49; *Франкфорт Г., Франкфорт Г. А., Уилсон Дж., Якобсен Т.* В преддверии философии. М., 1984, с. 36-37:

³ Տես *Гегель Г. В. Ф.* Лекции по философии религии / *Гегель Г. В. Ф.* Философия религии. В 2-х томах. Т. 2, М., 1975, с. 38-39; *Тихомиров Л. А.* Религиозно-философские основы истории. М., 2004, с. 71 և այլն:

⁴ *Тихомиров Л. А.* Религиозно-философские основы истории, с. 65:

⁵ Տես *Язычество*. Мн., 2006, с. 11-12:

ոգու վերադարձն **ինքն իրեն**»⁶: Այս հարցում փաստական նյութի վերլուծությունը Գ. Հեգելին բերել է այն հետևությանը, որ ոգու միջնորդավորված վերը նշված անցումը «համերաշխություն» դեռևս չի ենթադրում, որի ազդեցությամբ օբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերության դիցաբանական պատկերացումներում ասպարեզ է իջնում պայքարը, որը որպես կանոն ներկայացվում է որպես աստվածային էության պահ⁷: Այդ ամենի արդյունքում որոշակի փոփոխություններ են կատարվել նաև դիցաբանական կերպարների գործառնության ոլորտում, որի հետևանքով աստիճանաբար առաջնային տեղ են գրավել **հակադրության միտումները**: Հետագայում այդ միտումներն ամբողջական ու ավարտուն տեսք են ստանում հատկապես հասարակական-մշակութային հարաբերությունների հետագա զարգացման արդյունքում:

Հասարակական զարգացման արդյունքում բնական գործոնների կարևորությանը զուգընթաց ամբողջական կերպարանք է ստանում նաև **հոգևոր սկզբի** (ինտելեկտուալ և հոգևոր աշխարհի) մասին դիցաբանական պատկերացումը: Անդրադառնալով այդ երևույթի վերլուծությանը՝ Գ. Հեգելը ցույց է տալիս, որ այդ ճանապարհով դիցարաբանական համակարգերում հիմք է դրվել նաև «պատմականության ընկալմանը», քանի որ սուբյեկտը սկսել է դիտարկվել է որպես «... ինքն իր մեջ կյանքի, ոգու, շարժման պատմություն, որում այդ ուժերը տարբերակելու համար սուբյեկտը տարանջատվում է և իրեն **վերածում է իր նկատմամբ օտար ինչ-որ բանի**»⁸: Այդ ամենը թույլ է տալիս պնդել, որ լինելով կոնկրետ պատմական դարաշրջանի արդյունք՝ աշխարհակառույցի եզիպտական մոդելն իր մեջ ներառում է մարդ-բնություն հարաբերության ողջ ծավալը, որի շրջանակներում աշխարհակառույցը դիտարկվում և մեկնաբանվում է հասարակական կյանքի պայմանների համամանությամբ⁹:

Եվոլյուցիոն այդ գործընթացների արդյունքում աշխարհակառույցը ոչ միայն դիտարկվում է որպես **ծնունդ**, այլև մեկնաբանվում է տարածաժամանակային, պատճառական և խորհրդանշանների լեզվով: Աշխարհակարգի էությունը մեկնաբանող այդ կատեգորիաները, սակայն, ընկալվել են ոչ թե բովանդակային ինքնության և կոնկրետության, այլ «զգացմունքային գունեղության» տեսքով: Այդ իսկ պատճառով էլ նշված կատեգորիաների միջոցով նկարագրվող իրադարձությունները ներկայացվել են իրականությունից օտարված «առանձնահատուկ նշանակությամբ»: Այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ պետք է համարել այն, որ աշխարհակառույցի դիցաբանական պատումներն իրենց անուրանալի կնիքն են դրել ոչ միայն հին Եզիպտոսի կրոնական մտածողության, այլև Եզիպտոսի պատմության և արվեստի վրա: Դա է նաև պատճառը, որ Եզիպտա-

⁶ Гегель Г. В. Ф. Лекции по философии религии. Т. 2, с. 21.

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 22: Տեսաբանը մի այլ առիթով պնդում է, որ «... սուբյեկտիվությունն այդտեղ նախապես հանդես է գալիս պատկերացման տեսքով, մենք գործ ունենք մարդակերպ պատկերացվող սուբյեկտի, հոգևորի հետ, բայց դա անմիջական մարդը չէ, սուբյեկտի գոյությունը դրսևորվում է ոչ թե մարդկային մտածողության **անմիջականության**, այլ՝ **պատկերացման** անմիջականության տեսքով», նույն տեղում, էջ 36:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 36:

ցիների հասարակական կյանքը և արվեստները խորապես ներթափանցված են կրոնական աշխարհընկալմամբ, հետևաբար դրանք արժեքավոր նյութ են հանդիսանում նաև հնագույն արևելքի կրոնական պատկերացումների ուսումնասիրության գործում:

Աշխարհակառույցի եզիպտական դիցաբանության ուսումնասիրության գործում էական լրացումներ և ճշգրտումներ են մտցնում նաև նյութական մշակույթի հուշարձանները՝ տաճարները, դամբարանները, աստվածների արձանները, կենդանակերպ քանդակները, պապիրուսի, կավե սափորների նկարները, մի խոսքով՝ այն ամենը, ինչ գտնված է հնագիտական պեղումների ժամանակ: Դրանք, լինելով հին եզիպտացիների բնապատմական կյանքի զանազան շերտերի արտացոլումը, պատմական հարուստ նյութ են բովանդակում, որը գալիս է լրացնելու այդ շրջանից մեզ հասած գրավոր աղբյուրների հատվածական տեղեկությունները:

Փաստական նյութը թույլ է տալիս պնդել, որ աշխարհակառույցի եզիպտական դիցաբանական պատումներն ունեցել են իրենց էվոլյուցիոն փուլերը: Վերլուծաբաններից ոմանք գտնում են, որ հայտնի սահմաններում այս բնագավառին վերաբերող պնդումները ամբողջական չեն, քանի որ՝ «Առաջին հերթին մեր առջև է լուսաբանվող մոտավորապես երեք հազարամյա պատմություն՝ մինչպատմական շրջանի մասնակի տարբերակվող հետքերով: Ժամանակի այդ հատվածի ողջ ընթացքում մշտապես դանդաղ փոփոխություններ են իրականացել: Երկրորդ հերթին, հին եզիպտացին իր հայացքների մասին մեզ ոչ մի ձևակերպում չի թողել, որը կարողանանք օգտագործել որպես մեր հետազոտության հիմնարար միջուկ»¹⁰: Այդ ամենը պետք է համարել նաև այն բանի պատճառներից մեկը, որ հին եզիպտացիների կողմից առաջադրվել են տիեզերաբանական և տիեզերածնական պատկերացումների մի քանի մոդելներ: Այսպես, վաղ շրջանը բնորոշվում է հետևյալ տիեզերաբանական ըմբռնումներով. Երկիրը եզրագծերում անհարթություններ ունեցող ջրում լողացող հարթ պնակի տեսք ունի, որի կենտրոնում գտնվում է եզիպտական հարթությունը: «Ամհու» այդ ջրերը կոչում էին **Նու»**, որը նույնացվում էր նաև ստորերկրյա ջրերի հետ: Համարվում էր, որ «նախասկզբնական» այդ ջրից (քաոս) էլ ծնունդ է առել կյանքը: Նու»ը կյանքի ակունք էր համարվում նաև այն պատճառով, որ նրանից ամեն օր ծնվում էր Արեգակը, իսկ նրա կողմից սնվող քարանձավներից՝ Նեղոսը: Նու»ը միաժամանակ ջրային տարերքն էր՝ Օվկիանոսը (Մեծ Ջրահոսը կամ Մեծ Կանաչը), որը շրջապատում էր աշխարհը: Նրա հետ էր կապվում Արեգակի շրջապատույտը և համարվում էր, որ մայրամուտից հետո Արեգակը ստորերկրյա աշխարհով վերադառնում է Արևելք և ջրերից վերածնվում է արևելյան հորիզոնում: Բոլոր աստվածների ծնունդը նույնպես կապվում էր Նու»ի հետ:

Տիեզերքի վերին սահման էր համարվում Երկրի վրա բարձրացող և շրջված պնակի տեսք ունեցող **երկինքը**: Տարբեր պատումներում երկնականարի ամրությունը ներկայացվում է տարբեր կերպ: Պարզ տարբերակում համարվում էր, որ երկինքը պահպանվում է Երկրի սահմաններում կանգնած և հորիզոնի կողմերը խորհրդանշող չորս սյուների վրա: Մեկ այլ տարբերակում երկնականարը պահ-

¹⁰ *Франкфорт Г., Франкфорт Г. А., Уилсон Дж., Якобсен Т. В* преддверии философии, с. 56-57.

պանվում էր երկնքի և երկրի միջև գտնվող օդի **Շու** աստծու կողմից, որի պարտականությունն էր համարվում «ամուր կանգնել երկրի վրա և կրել երկնքի ծանրությունը»: Կար նաև տարբերակ, որում երկնականարը ներկայացվում էր իբրև երկնային կովի փորի վերին մաս, որը համարվում էր աստղերի հանգստարանը և Ծիր Կաթինը, որի շուրջն Արեգակը մակույկով կատարում էր իր ամենօրյա ճանապարհը: Համարվում էր նաև, որ երկնականարի տակ զետեղված են երկնային մարմինները՝ երկնականարից կախված աստղերը (այլ տարբերակում՝ աստղերը փայլով են պատում երկնային կովի կամ աստվածուհու փորը): Համաստեղություններից մի քանիսը աստծու համարում են ունեցել, որոնց խորհրդանշանները կապվել են մահվան դեմ հաղթանակի հետ: Այդ տեսանկյունից առանձնակի դեր է վերապահվել բևեռային աստղին և նրա շուրջ գտնվող աստղաբույլերին: Հին եգիպտացիները համարել են, որ այդ աստղերը «ոչնչացում կամ հոգնություն չեն իմացել», որի համար էլ համարվել են այն **հանգուցյալի խորհրդանշանը, որը հաղթանակ է տարել մահվան նկատմամբ**: Վաղ շրջանի պատումներում ուրույն տեղ է ունեցել նաև լուսնապաշտությունը, որը նույնացվել է լուսնի և իմաստության աստծու՝ **Թոթի** պաշտամունքի հետ: Սակայն պատմական դարաշրջանի դիցաբանական պատկերացումներն անփոփոխ ձևով կապվել են արևապաշտության հետ:

Սիմետրիայի տրամաբանությունը և տարածության սահմանափակության զգացումը հին եգիպտացիներին բերել է այն համոզման, որ երկինքն ունի իր հակոտնյան՝ **ստորերկրյա աշխարհը**, որն էլ նրանց համոզմամբ կազմել է տիեզերքի ներքին սահմանը: Վերջինիս հետ անփոփոխ հանդես է եկել նաև «երկնքի հյուսիսային հատվածի» պաշտամունքը: Հին եգիպտացիների համոզմամբ երկնային այդ հատվածը նույնացվել է «հավիտենական երանության» հետ: Թաղման հնագույն (բուրգերի) տեքստերում հանգուցյալի վերջնական նպատակ է համարվել երկնականարի հյուսիսային **Ղատ հատվածը**, որտեղ հանգուցյալը հնարավորություն է ունեցել միավորվել «հավիտենական» հյուսիսային աստղաբույլի հետ և հավիտենական կյանքի արժանանալ: Երկնականարի այդ հատվածը համարվել է նաև «եղեգնյա դաշտեր» կամ «Ջոհաբերությունների դաշտեր», որտեղ բնակվող հանգուցյալը դարձել է **ահ**, այսինքն՝ «գործունյա հոգի»: Պատմական շրջանում արևապաշտության ազդեցությամբ՝ Ղատը տեղափոխվել է ստորերկրյա աշխարհ, երանության երկու դաշտերը հյուսիսից տեղափոխվել են արևմուտք (որտեղ մահանում է Արեգակը), իսկ գործունյա հոգիների մշտական կացարան է համարվել հանդերձյալ աշխարհը¹¹:

Էվոլյուցիոն պատկերացումներով աչքի են ընկել նաև թեոգոնիայի մասին հին եգիպտական ըմբռնումները: Այսպես, հնագույն առասպելական պատումներում **աշխարհակառույցի հիմք է համարվում բուսական սկիզբը** (նախնական շրջանի առասպելներից մեկում փաստվում է, որ արևամանուկը ծնվում է լուտոսի ծաղկից): Եվ պետք է նկատել, որ դիցաբանական այս պատումը եգիպտական տիեզերածնության ամենատարածված տեսակետներից է, որը հասել է մինչև

¹¹ Այդ ամենի մանրամասները տե՛ս Сказки и повести Древнего Египта. М., 1979, с. 22-24, 108-128; **Море Я.** Во времена Фараонов. М., 1998, с. 77-123; 168-200: Հմնտ.՝ **Франкфорт Г., Франкфорт Г. А., Уилсон Дж., Якобсен Т.** В преддверии философии, с. 57-59; **Ильин В. В., Кармин А. С., Носович Н. В.,** с. 58-63; Язычество, с. 99-102 և այլն:

հռոմեական տիրապետության ժամանակաշրջանը: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ Արեգակ աստծու ծնունդը նույնպես կապվում է Լուսոսի հետ: Ընդ որում, թեոգոնիայի տարբեր ըմբռնումների հետ կապված՝ տարբեր են նաև աշխարհակառույցի համապատասխան մոդելները: Այդ բազմազանությամբ է պայմանավորված այն, որ աշխարհաստեղծման եգիպտական առասպելներում ուրույն տեղ են գրավել նաև այլ պատկերացումներ: Ըստ այդ մոդելների, մի դեպքում տիեզերքի, աստվածների և մարդկանց արարիչ է համարվում կենդանական սկիզբը՝ երկնային կովը, իսկ մեկ այլ դեպքում՝ թռչունը: Եգիպտական տարածված ավանդություններից մեկը պնդում է, որ Արևը ծնվում է **երկնային կովից**: Ըստ մի այլ առասպելի՝ Արեգակն իբրև ոսկե հորթ ծնվում է երկնքից (այս պարագայում երկինքը նույնացվում է հսկա կովի հետ): Թեոգոնիայի մեկ այլ ավանդության մեջ երկինքը պատկերվում է հողի տեսքով, իսկ աստղերը համարվում են նրանից ծնված խոճկորներ: Որոշ առասպելներում առաջադրվում է այն տեսակետը, որ **Արեգակը ծնվում է թռչունի** (արծիվ) կամ **միջատի** (բզեզ) կերպարանքով, որ Արեգակը գունդ է, որը երկնքով զլորում է արևային բզեզը (ճիշտ այնպես, ինչպես երկրի վրա բզեզը զլորում է գոմաղբը): Համանման ձևով լուսինն էլ համարվում է արծվի (Քեփրեն) աչք:

Այդ ամենի համեմատական վերլուծությունը միանգամայն տրամաբանորեն թույլ է տալիս պնդել, որ աշխարհակառույցի եգիպտական նշված ավանդաբույցները ստեղծվել են տարբեր ժամանակներում, մտավոր ու հասարակական զարգացման տարբեր աստիճաններում գտնվող քաղաքակրթական շերտերում:

Բնական պետք է համարել նաև այն, որ կոնկրետ դարաշրջանից և միջավայրից կախված՝ բնական և հասարակական երևույթների անձնավորումը կատարվել է տարբեր կերպ, որի պատճառով էլ աշխարհածնական եգիպտական առասպելները տարբերվում են մեկը մյուսից: Այդ տեսանկյունից լիովին բացատրելի է դառնում աշխարհակառույցի եգիպտական ավանդաբույցների թվացյալ հակասականությունը: Բանն այն է, որ այդ առասպելների ձևավորման գործում էական դեր է կատարել աշխատանքի հասարակական բաժանումը: Այլ կերպ ասած՝ այս պարագայում էական նշանակություն է ստացել այն, թե ովքեր են տվյալ առասպելի ստեղծողները՝ որսորդները, թե՞ երկրագործները: Առանցքային պետք է համարել նաև այն, թե երբ են ապրել առասպելաստեղծները՝ մայրիշխանությամբ, թե՞ հայրիշխանության շրջանում: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ քննարկվող շրջանի դիցաբանական պատկերացումների վրա որոշակի ազդեցություն են ունեցել նաև ընտանեկան-ազգակցական, ունեցվածքային և հասարակական ու կենցաղային այլ հարաբերությունները, որոնց ազդեցությամբ որոշակի «խմբավորում» է կատարվել աշխարհածագման վերաբերյալ պատկերացումների համակարգում:

Երկրպագելով օձին կամ թռչունին, ծաղկին կամ ծառին, մարդուն (հերոսին) կամ իր արյունակցական ցեղը՝ դիցապաշտ եգիպտացին չէր կարող իր պատկերացումները ինչ-որ կերպ չշաղկապել «հզորագույն նախածնողի»՝ իրեն շրջապատող բնական միջավայրի հետ: Այդ համատեքստում ամենևին էլ զարմանալի չէ, որ առանձին դեպքերում այս կամ այն կենդանին, թռչունը կամ բույսն է հանդես գալիս որպես տիեզերքի արարիչ և թեոգոնիայի հիմք: Մասնագիտական գրականության մեջ միանգամայն հիմնավոր ցույց է տրվում, որ այդ գործընթաց-

ները սերտորեն շաղկապված են աշխարհագրական միջավայրի հետ: Հազարամյակներ առաջ Նեղոսի հովտի բնակիչները, որոնք զբաղվում էին հավաքչությամբ, ապա՝ որսորդությամբ և երկրագործությամբ, ֆիզիկական ու մտավոր ուժերի լարումով աստիճանաբար յուրացրել են նաև արհեստները: Նստակյաց կյանքի անցնելով՝ նրանք ոչ միայն փորձել են հասկանալ ու իմաստավորել տարվա եղանակների հերթափոխությունը, Նեղոսի վարարման հետևանքով կյանքի վերածնունդը և այլն, այլև՝ այնպիսի բարդ երևույթներ, ինչպիսիք էին թռչունների և կենդանիների ինքնատիպ կյանքը, կենդանի մարմնի գործառնական առանձնահատկությունները և այլն:

Այդ ամենով շրջակա միջավայրը «յուրացնելու»՝ հասկանալու և բացատրելու փորձերը օբյեկտիվորեն կապվել են գիտելիքների տարբեր ոլորտների էությունն ու դրանց միջև գոյություն ունեցող փոխադարձ կապը բացահայտելու տրամաբանական գործընթացների հետ: Եվ այդուհանդերձ նրանց այդպես էլ վիճակված չէր այդ գործընթացը հասցնել տրամաբանական ավարտի, քանի որ ճանաչող մարդն ինքը բոլորակերպ կախված էր բնությունից, բնական ուժերից, բնության տարերքից: Այդ ամենի ազդեցությամբ էլ նախամարդն իրեն շրջապատող միջավայրը և երևույթներն իմաստավորել է երևակայական ընկալմամբ, այն համարել է հրաշք, մեռած նախնիների ոգի, տոտեմ-նախահայրերի դրսևորում և այլն: Անկասկած է, որ դիցապաշտ գիտակցությունն այդ ամենով հավասարապես ամրագրել է նաև իր կախվածությունն ու անօգնականությունը, և փորձել է բնության վրա իր իշխանությունը հաստատել ծիսական գործողությունների (ազդեցության) միջոցով:

Հասարակական հարաբերությունների աստիճանական զարգացման հետևանքով դիցաբանական համակարգերում ավելի ու ավելի հաստատուն տեղ են գրավել անձնավորված և ապա՝ մարդակերպ աստվածները: Այդ միտումների ազդեցությամբ համապատասխան փոփոխություններ են կատարվում նաև աշխարհակառույցին վերաբերող պաշտամունքային շերտերում: Այդ օրինաչափության դրսևորումներից մեկն այն է, որ արևամանուկի ծնունդը կապվում է ամենայնի սկիզբ համարվող **Նուտ** աստվածուհետ, ինչն էլ արևամանուկին թույլ է տալիս «արարել մյուս աստվածներին և մարդկանց»: Դրանով պետք է բացարել նաև այն, որ եգիպտացիները սարկոֆագների վրա պատկերում էին արեգակից ծնվող զանազան աստվածուհիների, որոնք արեգակին անփոփոխ կերպով ուղեկցում էին նրա հավերժական շրջապտույտում: Ակնհայտ է նաև, որ դիցաբանական այս պատումի մեջ գերիշխում է մայրիշխանության մոտիվը: Այդ իրողությունը փաստում է մեզ հասած եգիպտական դիցաբանական ավանդազրույցներից մեկը, որտեղ աշխարհի արարիչ է համարվում **Մայր աստվածուհին՝ Դիցամայրը, որն արևամանուկին ծնում է իր որովայնից՝ առանց արական սկզբի օգնության**: Այս տեսանկյունից միանգամայն օրինաչափ է հնչում Հերոդոտի այն պնդումը, որ **եգիպտական քաղաքակրթությունը հենվել է մայրության պաշտամունքի վրա**: Դա նշանակում է, որ նախնական շրջանում Իսիդայի պաշտամունքի «գերազանցությունը» համարվել է ոչ թե այն, որ նա եղել է Օսիրիսի կինը, այլ նախապատվություն է տրվել այն բանին, որ Իսիդան հանդիսացել է միստերիայի խստագույն պահապանը, սիրո, խաղաղության և բարության հովանավորը:

Վերին և Ստորին եգիպտոսում հովանավոր աստվածների համարում են ունեցել նաև օձերը, որոնց վերաբերյալ պաշտամունքային պատկերացումները պահպանվել են նաև հետագա դարաշրջաններում: Դրանով է բացատրվում այն, որ թևավոր օձերի՝ կոբրաների տեսքով Իսիդան և Նեֆտիդան պաշտպանել են Օսիրիսի մարմինը՝ ծածկելով այն իրենց թևերի ստվերով: Շրջանառվել է նաև այն համոզումը, որ Թեբեի գերեզմանները հսկում է օձ աստվածուհին, իսկ Քեփ-րեն փարավոնի դամբարանը՝ թևավոր օձը: Ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ եգիպտացիների համար օձերը մարմնավորել են նաև ջրային քառսը (ինչն արտացոլված է օձի և Ռաի նավի պատումի մեջ)¹²:

Աշխարհակառույցի եգիպտական պատումներում կարելի է հանդիպել նաև այնպիսի դիցաբանական գրույցների, որոնցում **աշխարհակառույցի հիմք է համարվում արական սկզբի**: Այդպիսի անուրանալի օրինակներից են **Խնու-մի**, **Յելիոպոլիսի Ատում Ռա** և այլ աստվածների սկզբնավորումը: Յիշատակութուններ են պահպանվել նաև այն մասին, որ Արեգակի Ռա աստվածն սկզբնավորվել է ինքնաբեղմնավորմամբ՝ առանց մայր աստվածուհու: Սա «ինքնածին սերմամբ» մի յուրահատուկ դիցաբանական պատում է, համաձայն որի արական աստվածների առաջին զույգը գոյավորվել է առանց իգական սկզբի: Այդ ամենը նկատի ունենալով կարելի է պնդել, որ նախապատմական շրջանի եգիպտական դիցաբանության թեոգոնիկ պատկերացումների շրջանակներում հայրիշխանության հաղթանակն ամրագրվել է համապատասխան տիեզերածնական ավանդազրույցների մեջ, ինչը պատմական դարաշրջանի հասուն դիցաբանական համակարգերում արտացոլվել է **աստվածային արական սկզբին տրվող գերապատվության տեսքով**: Աշխարհակառույցի նմանատիպ պատկերացումների դասական օրինակ կարելի է համարել հատկապես Յելիոպոլիսի էնենեդան:

Աշխարհակառույցի եգիպտական պատկերացումների համակարգում հարկ է առանձնացնել նաև այսպես կոչված «ինքնածին սերման» թեոգոնիկ պատկերացումները: Պատճառը հավանաբար եղել է այն, որ նախապատմական եգիպտացիները ամփոփ պատկերացումներ չեն ունեցել սաղմնավորման մասին և աշխարհակառույցի ու թեոգոնիայի բազմաթիվ հարցեր ներկայացրել են այդ միջոցով ծագումնաբանական հարցերը մեկնաբանելու գաղափարի հետ:

ЕГИПЕТСКИЕ МОДЕЛИ МИРОЗДАНИЯ

Г. А. Саркисян

Мифопоэтическое мышление древних египтян выдвинуло несколько моделей мироздания. Выбрав и объединив обрывки идей из разрозненных источников, можно представить следующую систему мироздания: земля-плоское блюдо со сморщенным ободком. Внутренним дном этого блюда была

¹² Այդ ամենի մանրամասները տես Տեղադրությունները և повести Древнего Египта, с. 30-36; Мифология (Большой энцикл. словарь). М., 1998, с. 267, 395, 405-406, 636; Мифы народов мира (энциклопедия). Т. 1, М., 1987, с. 420-426: Հմտ.՝ *Ильин В. В., Кармин А. С., Носович Н. В.*, с. 58-63; Язычество, с. 99-102; *Море Я.* Во времена Фараонов, с. 124-200; *Франкфорт Г., Франкфорт Г. А., Уилсон Дж., Якобсен Т.* В преддверии философии, с. 61-70 և այլն:

плоская аллювиальная равнина Египта, а сморщенным ободком - цепь горных стран - чужих земель. Блюдо плавало в "Великой Зелени" - в окружающем мир Океане - бездонной и первобытной воде (Нун), из которой рождается жизнь (и Нил). Над землей нависла верхняя граница вселенной - стоящих на четырех столбах и на боге воздуха Шу перевернутая чаша неба (иной вариант - небосвод изображался в виде нижней поверхности живота небесной коровы, усыпанного звездами и производящего Млечный Путь, вдоль которого ладья солнца ежедневно совершает свой небесный путь). Под небесным сводом располагались свисающие небесные тела и луна.

EGYPTIAN MODEL OF THE UNIVERSE

G. A. Sarkisyan

Mythopoetic thinking of the ancient Egyptians put forth several models of the universe. By selecting and combining scraps of ideas from disparate sources, we can provide the following system of the universe: the earth is flat dish with a wrinkled rim. Inner bottom of the dish was flat alluvial plain of Egypt, and the wrinkled rim - a chain of mountainous country - foreign lands. The dish was floating in the "Great Green" - in the surrounding world ocean - fathomless and pristine waters (Nun), from which comes life (and Neil). Above the ground hanging upper limit of the universe - standing on the four pillars and the god Shu of air inverted bowl of the sky (another variant - the sky was represented as the lower surface of the celestial cow stomach, studded with stars and produces the Milky Way, along which the boat of the sun makes its daily path of heaven). Under the vault located hanging celestial bodies and the moon.